6 *ծ էթող ծնողա-*
7 *ց իւրոց. յիշե-*
8 *ցէք։*

Մանոթություն.— *Պետք է ենթադրել, որ տասնամյա հասակում վախճանված անսովոր Նեքնեք անունը կրող երեխայի հետ թաղված է նաև նրա հայրը, պարոն Աւետե(ա)ցը, որովհետև № 136 արձանագրության մեջ հանդես են գալիս քույրը՝ Լուսերը և կինը՝ Զենանը. ուրեմն պարոն Ավետյացն այդ ժամանակ մեռած էր։ Նրանք խաչքարը կանգնեցրել են ոչ միայն Նեքնեքի, այլ սոցա հանգստարանի վրա, նշանակում է, այդտեղ թաղված է նաև մեկ ուրիշը, որ կարող է լինել միայն պարոն Ավետյացը, որովհետև եթե ուրիշը լիներ, պետք կլիներ նշել նաև այդ մեկ ուրիշի անունը ևս։*

138. Գրատան նախագավթի հս պատին դրսից, փորաքանդակ խաչի գլխին եվ ստորին մասում

(Լուս. № 87)

ԺԶ դար

Հրատարակվում է առաջին անգամ

Նկ. 87. Արձ. № 138։

1 *Որք երկրպագէք Դաս-*
2 *ուլս եւ զԶանխաթու-*
3 *նս յա յշ։*

Մանոթություն.— *1. Ժամանակը որոշել ենք գրերի ոճով։*

2. Վերջին յա յշ պետք է կարդալ՝ յաղաւթս յիշեցէք։

Նկ. 88. Արձ. № 139։

139. Մատենադարանի նախագավթը Աստվածածին եկեղեցու հետ միացնող պատի հր երեսին

(Լուս. № 88)

Հ ՈՀԴ Մ 1225

Հրատարակվում է առաջին անգամ